Հայաստանի Հանրապետություն

Մրցակցության պաշտպանության հանձնաժողով

# 2022-2024

## ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ

## ԵՎ 2022

## ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՀԱՅՏ

## 1. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ ՆԱԽՈՐԴՈՂ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ՀԱՏՎԱԾՈՒՄ

ՀՀ մրցակցության պաշտպանության հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործունեությունն ուղղված է ազատ տնտեսական մրցակցության պաշտպանությանը և խրախուսմանը, ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանությանը նպաստելուն, բարեխիղճ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովմանը ՀՀ-ում:

Հանձնաժողովի առջև դրված խնդիրներն են՝

- ձեռնարկատիրության զարգացման և սպառողների շահերի պաշտպանության նպատակով տնտեսական մրցակցության պաշտպանում ու խրախուսում,
- բարեխիղճ և ազատ մրցակցության համար անհրաժեշտ միջավայրի ապահովում,
- հակամրցակցային գործունեության կանխարգելում, սահմանափակում և նախազգուշացում,
- տնտեսական մրցակցության պաշտպանության նկատմամբ վերահսկողություն:

Իր առջև դրված խնդիրները լուծելու համար Հանձնաժողովին վերապահված են մի շարք լիազորություններ, որոնցից են՝

- հակամրցակցային համաձայնությունների բացահայտում և պատասխանատվության միջոցի կիրառում,
- տնտեսական գործունեության արգելված համակարգման նկատմամբ վերահսկողություն,
- մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահումների բացահայտում և պատասխանատվության միջոցի կիրառում,

- պետական մարմինների կողմից տնտեսական մրցակցությունը խաթարող երևույթների բացահայտում և պատասխանատվության կիրառում,
- պետական օժանդակության նկատմամբ վերահսկողություն,
- համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողություն,
- անբարեխիղճ մրցակցության երևույթների բացահայտում և պատասխանատվության միջոցների կիրառում:

Յուրաքանչյուր տարի մինչև մայիսի 1-ը Հանձնաժողովը հրապարակում է նախորդ տարվա իր գործունեության հաշվետվությունը, որն առնվազն ներառում է համառոտ տեղեկատվություն Հանձնաժողովի գործունեության մասին, ապրանքային շուկաների վերլուծությունը, տնտեսական մրցակցության կարգավորման և վերահսկման ուղղությամբ իրականացված միջոցառումները, մրցակցային իրավիճակի բարելավմանն ուղղված առաջարկների իրականացման ընթացքի վերլուծությունը, իր գործունեության ֆինանսական հաշվետվությունը:

Հանձնաժողովն իր գործառույթների շրջանակներում իրականացնում է ոլորտային ուսումնասիրություններ որևէ ոլորտում կամ ապրանքային շուկայում մրցակցային իրավիճակը, տնտեսական մրցակցության կանխման, սահմանափակման կամ արգելման կամ սպառողների շահերի վնասման դեպքերը պարզելու, մրցակցային իրավիճակի վրա ազդող այլ պայմանները բացահայտելու նպատակով:

Ոլորտային ուսումնասիրության շրջանակում Հանձնաժողովն ըստ անհրաժեշտության հատկորոշում է ապրանքային շուկայի ապրանքատեսակային և աշխարհագրական սահմանները, որոշում է ապրանքային շուկայի մասնակիցների կազմը, ապրանքային շուկայի ծավալները, տնտեսվարող սուբյեկտների մասնաբաժինները, ապրանքային շուկայի կենտրոնացվածության աստիճանը, ուսումնասիրում է համապատասխան իրավական ակտերը, պարզում է ապրանքային շուկայում մուտքի խոչընդոտների առկայությունը, ինչպես նաև ուսումնասիրում է ոլորտին կամ ապրանքային շուկային առնչվող այլ հանգամանքներ, որոնք կարող են

ընդհանուր մրցակցային իրավիճակի, տնտեսական մրցակցության կանխման, սահմանափակման կամ արգելման կամ սպառողների շահերի վնասման դեպքերի վերաբերյալ եզրահանգումներ կատարելու հնարավորություն տալ:

ՀՀ-ում արդյունավետ մրցակցային միջավայրի ձևավորման և տնտեսական մրցակցության պաշտպանության օրենսդրության դրույթների պահպանման նկատմամբ հսկողություն սահմանելու նպատակով Հանձնաժողովը յուրաքանչյուր տարի իրականացնում է պարենային և ոչ պարենային նշանակության ապրանքների և ծառայությունների 5 ապրանքային շուկայի կամ ոլորտի ուսումնասիրություն:

Հանձնաժողովը 2020 թվականին իրականացրել է Հեռուստատեսության և թվային հարթակների միջոցով գովազդի տարածման, Հանքարդյունաբերության, Ցորենի և ալյուրի, Ձվի, Դեղերի շրջանառության ոլորտներում ուսումնասիրություններ: Ոլորտային ուսումնասիրությունները չեն հանդիսանում վարչական վարույթներ կամ վարչական իրավախախտման վարույթներ:

2020 թվականին իրականացվել է ուսումնասիրություն կաթնամթերքի շրջանառության ոլորտում հնարավոր անբարեխիղճ մրցակցության գործողությունները բացահայտելու և հասարակության մոլորեցումը բացառելու նպատակով: Ուսումնասիրությունը միտված էր բացահայտել կաթնամթերքի արտադրման փուլում բուսական յուղերի (կոկոսի, պալմայի և այլն) օգտագործումն այն ապրանքներում, որոնց վրա մակնշված է թթվասեր, կարագ կամ կաթնային յուղով պատրաստված այլ կաթնամթերք: Հանձնաժողովի կողմից կաթնամթերքի (կաթնային մթերք, կաթնային բաղադրյալ մթերք, կաթ պարունակող մթերք, կաթնային յուղի փոխարինիչով կաթ պարունակող մթերք և այլ կաթնամթերք) ոլորտի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ բազմաթիվ դեպքերում կաթնամթերք արտադրողները կաթնային մթերքի բաղադրության մեջ օգտագործում են կաթնայուղի փոխարինիչ՝ այդ մասին չնշելով բաղադրության մակնշման մեջ, ինչը կարող է բացահայտվել միայն մասնագիտական փորձաքննության արդյունքում: Պետական օժանդակության նկատմամբ վերահսկողության ինստիտուտի

կատարելագործման նպատակով 2020 թվականին համապատասխան օրենսդրական փոփոխություններով հստակեցվել է պետական օժանդակության հասկացությունը, ամրագրվել է պետական օժանդակություն տրամադրող մարմինների կողմից տրամադրված պետական օժանդակությունների վերաբերյալ տեղեկատվությունը Հանձնաժողովին տրամադրելու պահանջը և Հանձնաժողովին է վերապահվել պետական մարմինների կողմից տրամադրվող պետական օժանդակությունների վերաբերյալ միասնական գրանցամատյանի վարման գործառույթ: Տեղեկատվական բազայի ուսումնասիրությունն ու վերլուծությունը հնարավորություն է տալիս Հանձնաժողովին բացահայտել պետական օժանդակություն տրամադրելու արդյունքում տնտեսական մրցակցության հնարավոր սահմանափակման, կանխման կամ արգելման դեպքերը, Օրենքի հնարավոր խախտումները:

2018 թվականի ընթացքում Հանձնաժողովն ընդունել է 189 որոշում: Հարուցվել է ընդհանուր թվով 69 վարչական վարույթ, որից 64-ը՝ Հանձնաժողովի նախաձեռնությամբ, իսկ 5-ը՝ ստացված դիմում-բողոքների հիման վրա: Հարուցված վարչական վարույթների ընթացքում կիրառվել է 55 պատասխանատվության միջոց:

2019 թվականի ընթացքում Հանձնաժողովն ընդունել է 268 որոշում: Հարուցվել է ընդհանուր թվով 125 վարչական վարույթ, որից 40-ը՝ Հանձնաժողովի նախաձեռնությամբ, իսկ 85-ը՝ ստացված դիմում-բողոքների հիման վրա: Հարուցված վարչական վարույթների արդյունքում կիրառվել է 46 պատասխանատվության միջոց:

2020 թվականի ընթացքում Հանձնաժողովն ընդունել է 400 որոշում: Հարուցվել է ընդհանուր թվով 119 վարչական վարույթ, որից 45-ը՝ Հանձնաժողովի նախաձեռնությամբ, իսկ 74-ը՝ ստացված դիմում-բողոքների հիման վրա:

2020 թվականի ընթացքում Հանձնաժողովի կողմից բացահայտվել է անբարեխիղճ մրցակցության գործողության 43 դեպք (նախորդ տարի՝ 53): Համակենտրոնացման գործարքները նախորդ տարվա ցուցանիշի համեմատ նվազել են 22-ով՝ կազմելով 14, որը պայմանավորված է 2020 թվականին Covid-19

համավարակի և պատերազմական իրավիճակի հետևանքով տնտեսական ակտիվության անկմամբ:

Հանձնաժողովի գործունեությունն առավել հրապարակային և թափանցիկ դարձնելու նպատակով 2018, 2019 և 2020 թվականների ընթացքում Հանձնաժողովն ակտիվորեն գործել է ծրագրային առաջնահերթությունների, մրցակցության ոլորտում իրականացված աշխատանքների և դրանց արդյունքների վերաբերյալ հասարակության իրազեկման ուղղությամբ:

2020 թվականին գերիշխող դիրքի և հակամրցակցային համաձայնությունների վերահսկողության ընթացքում իրականացված վարչական վարույթների շրջանակներում դիտարկված շուկաների և ներգրավված սուբյեկտների վերաբերյալ արդյունքը հետևյալն է.

1. Ծառայությունների շուկա (դիտարկված շուկաների քանակը՝ 4, ներգրավված սուբյեկտների քանակը՝ 32),
2. Պարենային ապրանքների շուկա (դիտարկված շուկաների քանակը՝ 6, ներգրավված սուբյեկտների քանակը՝ 34),
3. Ոչ պարենային ապրանքների շուկա (դիտարկված շուկաների քանակը՝ 4, ներգրավված սուբյեկտների քանակը՝ 8):

Պարենային ապրանքների դիտարկված 6 շուկաներից և ներգրավված 34 սուբյեկտներից 2 շուկան և 20 սուբյեկտը դիտարկվել են հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ իրականացված վարչական վարույթների շրջանակներում: Ոչ պարենային ապրանքների դիտարկված 4 շուկաներից և ներգրավված 8 սուբյեկտներից 2 շուկան և 3 սուբյեկտը դիտարկվել են հակամրցակցային համաձայնությունների վերաբերյալ իրականացված վարչական վարույթների շրջանակներում:

Հանձնաժողովը միջազգային համագործակցության ոլորտում 2020 թվականին շարունակել է ակտիվ աշխատանքներ իրականացնել հետևյալ նպատակներն ու խնդիրներն իրականացնելու համար՝

- ձևավորել, պահպանել, զարգացնել և ընդլայնել համագործակցությունը միջազգային հեղինակավոր կառույցների, մրցակցային մարմինների, կազմակերպությունների հետ,
- կատարել միջազգային պայմանագրերով և միջազգային կազմակերպությունների անդամակցությամբ պայմանավորված՝ Հանձնաժողովի ստանձնած պարտավորությունները,
- խթանել օտարերկրյա կառույցների հետ փորձի փոխանակման և վերապատրաստման ուղղությամբ համագործակցությունը,
- կազմակերպել և/կամ մասնակցել միջոցառումների՝ համաժողովների, սեմինարների, աշխատաժողովների, հանդիպումների ինչպես առկա, այնպես էլ հեռավար կարգով,
- ապահովել արտասահմանյան կառույցների հետ լավագույն փորձի, նյութերի և տեղեկատվության փոխանակումը,
- իրականացնել 2020 թվականին նախատեսված, սակայն Covid-19 համավարակով պայմանավորված կասեցված և հետաձգված նախագծերը:

Իր առջև դրված խնդիրների լուծման և նպատակների իրականացման համար Հանձնաժողովը կարևորում է թիմի ներգրավվածությունը կառույցի աշխատանքներում և շարունակում է դեռևս 2019 թվականին սկսված կառուցվածքային բարեփոխումները: Հանձնաժողովը համալրվում է որակյալ մասնագետներով, ապահովվում է աշխատակիցների աշխատանքային կարողությունների ու մասնագիտական ունակությունների զարգացումը, մասնագիտական աճը, ամենօրյա աշխատանքների օպերատիվության և արդյունավետության բարձրացումը:

## 2. ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԹԻՐԱԽՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

Հանձնաժողովը, հիմք ընդունելով տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծության արդյունքում բացահայտված հիմնախնդիրները, ինչպես նաև հաշվի առնելով նախորդ տարիներին տնտեսական մրցակցության պաշտպանության ոլորտում կուտակած փորձը, 2022-2024 թվականների ընթացքում իրագործման համար սահմանել է հետևյալ նպատակները.

- Պարենային և ոչ պարենային նշանակության ապրանքների և ծառայությունների 15 ապրանքային շուկայի կամ ոլորտի ուսումնասիրություն, ամփոփ արդյունքների հրապարակում,
- Պետական մարմինների և Հանձնաժողովի միջև տեղեկատվության փոխանակման գործընթացի արդյունավետության բարձրացման և սեղմ ժամկետներում անհրաժեշտ տեղեկատվության ստացման նպատակով այլ պետական մարմինների էլեկտրոնային բազաներին հասանելիության ապահովում,
- Հանձնաժողովի գործունեության արդյունքում ստացված տեղեկատվության, ինչպես նաև կայացված որոշումների, ապրանքային շուկաների ուսումնասիրությունների ամբողջացման, համակարգման ու թվայնացման նպատակով էլեկտրոնային բազաների ստեղծում ու Հանձնաժողովի աշխատակիցների՝ այդ բազաներին հասանելիության ապահովում,
- ՀՀ կառավարության, նախարարությունների, գերատեսչությունների և այլ շահագրգիռ մարմինների հետ մրցակցային արդյունավետ քաղաքականության ոլորտում համատեղ գործողությունների իրականացում,
- Մրցակցության փաստարկման և քարոզչությանն ուղղված աշխատանքների ուժեղացում, տնտեսական մրցակցության օրենսդրական հարցերում հասարակության տեղեկացվածության ապահովման աջակցություն,
- Պետական օժանդակության տրամադրման նկատմամբ Հանձնաժողովի կողմից վերահսկողության իրականացում՝ ապրանքային շուկաներում մրցակցության

սահմանափակման, կանխման կամ արգելման բնույթի խախտումների բացառման նպատակով,

- Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության և Ատոմային էներգիայի եվրոպական համայնքի ու դրանց անդամ պետությունների միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով Հանձնաժողովին վերապահված պարտավորությունների և հանձնառությունների իրականացման ուղղությամբ աշխատանքների իրականացում, մասնավորապես՝ մրցակցության, պետական օժանդակության, սպառողների շահերի պաշտպանության և պետական կազմակերպություններին առնչվող հարցերով:

Վերոնշյալ նպատակների և թիրախների իրագործելիությունը Հանձնաժողովը ծրագրում է ապահովել նշված միջոցառումների կատարմամբ.

- Հանձնաժողովի կողմից իրականացվող վարչական վարույթի և ուսումնասիրությունների սուբյեկտային, ժամկետային ու գործառութային առանձնահատկությունների հաշվառմամբ վարչական վարույթի և ուսումնասիրությունների իրականացման արդյունավետ կարգավորումների ներդրմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների արդյունքում,
- հակամրցակցային համաձայնությունների բացահայտման ու կանխարգելման գործառույթի իրականացման արդյունավետության բարձրացման նպատակով հանկարծահաս ստուգումների (dawn raids) ինստիտուտի ներդրմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների արդյունքում,
- օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման համաչափության, իրավական որոշակիության առավել արդյունավետ ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ պատասխանատվության միջոցների կիրառման մեթոդաբանության վերանայմանն ուղղված օրենսդրական փոփոխությունների արդյունքում,
- գերիշխող դիրքի որոշման չափանիշների կատարելագործման, Օրենքով սահմանված չափանիշների վերանայման, ինչպես նաև գերիշխող դիրքի

չարաշահման դրսևորումների ընդլայնման, այդ թվում՝ մտավոր սեփականության իրավունքի ոլորտում դրսևորվող չարաշահումների ներառման նպատակով օրենսդրական փոփոխությունների արդյունքում,

- իրական փոխկապվածություն ունեցող անձանց՝ Օրենքի իմաստով որպես անձանց խումբ դիտարկելու անհրաժեշտությամբ պայմանավորված՝ օրենսդրական փոփոխությունների արդյունքում,
- տնտեսվարող սուբյեկտների համակենտրոնացումների նկատմամբ վերահսկողության արդյունավետության բարձրացման, այդ թվում՝ բաժնետիրական ընկերությունների բաժնետոմսերի սեփականատերերի ու նրանց փոփոխությունների վերաբերյալ Հանձնաժողովի կողմից տեղեկատվության ստացման հնարավորության ապահովման նպատակով օրենսդրական փոփոխությունների արդյունքում,
- Օրենքով կիրառվող բազմաթիվ հասկացությունների իմաստային անորոշությունների վերացման ու թերի կարգավորումների ամբողջացման նպատակով Օրենքի 4-րդ հոդվածի մի շարք ձևակերպումների վերանայման և այլ հասկացությունների սահմանմանն ուղղված օրենսդրական արդյունքում,
- Օրենքի դրույթների կիրարկման ապահովման նպատակով նորմատիվ իրավական ակտերի մշակման, գործող նորմատիվ իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների իրականացման արդյունքում:

## 3. ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ

| | Գերակա ծախսային ուղղությունները ՄԺԾԾ ժամանակահատվածի համար՝ | | | Հիմնավորումներ |
|---|---|---|---|---|
| | 2022 | 2023 | 2024 | |
| 1 | Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական քաղաքականության դրույթների իրականացում | | | Հանձնաժողովը, նպաստելով ՀՀ կառավարության գործունեության միջոցառումների ծրագրով ստանձնած պարտավորությունների և գերակա խնդիրների իրականացմանը, ինչպես նաև ազատ և բարեխիղճ մրցակցության արդյունավետության բարձրացման նպատակով և ՀՀ կառավարության ամրագրված գործողությունների իրականացումը: Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական քաղաքականության դրույթների իրականացումը նպաստում է ներդրումային և գործարար միջավայրի բարելավման միջոցառումների համակարգված իրականացմանը: |
| 2 | «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու, ինչպես նաև Օրենքի հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերի լրամշակում և նոր նորմատիվ | | | Հանձնաժողովի որոշումների հիմնավորվածության բարձրացման առումով՝ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի խախտումների վերաբերյալ ապացույցների ձեռքբերման և ամրապնդման մեխանիզմների ընդարձակում, հակամրցակցային գործունեության կանխարգելման, սահմանափակման և նախազգուշացման առումով, մենաշնորհի կամ գերիշխող դիրքի չարաշահման կանխման առումով մենաշնորհի կամ գերիշխող դիրք ունեցող տնտեսվարող սուբյեկտների կողմից գների չհիմնավորված բարձրացման, իջեցման կամ պահպանման և այլ չարաշահումների հայտնաբերման գործուն մեխանիզմների սահմանում, «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենսդրության կիրարկման արդյունավետության բարձրացման նպատակով նորմատիվ իրավական ակտերի |

| | | |
|---|---|---|
| | իրավական ակտերի ընդունում | մշակում և (կամ) գործող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործում: |
| 3 | Ապրանքային շուկաներում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված չարաշահումների սահմանափակումը, կանխումը, արգելումը, ձեռնարկատիրության զարգացման նպաստումը | Փոքր և միջին ձեռնարկությունների ֆինանսական և ներդրումային, նորարարական և արտաքին տնտեսական, գործարար տեղեկատվական, խորհրդատվական և ուսուցողական ծառայություններից օգտվելու հնարավորությունների ընդլայնում: |
| 4 | Միջազգային համանման կառույցներին ինտեգրվելը և փորձի փոխանակումը | Տնտեսական մրցակցության պաշտպանության իրավական համակարգի զարգացման նպատակով միջազգային փորձագետների, ԵԱՏՄ և ԵՄ մրցակցային մարմինների հետ ակտիվ համագործակցությունը ծրագրված աշխատանքների իրականացման համար հանդիսանում է անհրաժեշտ գործոն: |

## 9. ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԱՄՓՈՓՈՒՄ

2020 թվականին «Տնտեսական մրցակցության պաշտպանություն» ծրագրի ճշտված պլանը կազմել է 433255,2 հազ.դրամ, ֆինանսավորումը՝ 427957,2 հազ. դրամ, դրամարկղային ծախսերը՝ 427363,9 հազ. դրամ:

Հանձնաժողովի 2021 թվականի հաստատված բյուջեն կազմում է 539846,4 հազ. դրամ:

2022-2024թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով կանխատեսվում է համապատասխանաբար՝ 546161,7 հազ. դրամ (2022թ), 555715,3 հազ. դրամ (2023թ), 560293,4 հազ. դրամ (2024թ):

2022-2024 թվականների համար «Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ» հոդվածով նախատեսված ծախսի կանխատեսման հիմքում դրված են Հանձնաժողովի հաստիքային միավորներից յուրաքանչյուրի գծով անհատական հաշվարկները, ինչպես նաև հաշվի է առնվել քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնող անձանց աշխատավարձերի բնականոն աճը:

Պարգևատրումների և խրախուսումների ընդհանուր գումարը չի գերազանցում աշխատավարձի ֆոնդի 30%-ը:

«Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով նախատեսվում է քաղաքացիական ծառայողների աշխատավարձի ֆոնդի մոտ 10%-ի չափով պարգևատրում:

«Էներգետիկ ծառայություններ» հոդվածով կանխատեսվող ծախսի հաշվարկները կատարվել են՝ հաշվի առնելով էլեկտրաէներգիայի սակագնի փոփոխությունը և նախորդ տարվա փաստացի ծախսը, որի չափը պայմանավորված էր եղանակային անկանխատեսելի պայմաններով և Հանձնաժողովի կողմից վարձակալված տարածքի մի մասում գազով անբավարար ջեռուցմամբ:

«Կապի ծառայություններ» հոդվածով նախատեսվող ծախսից կրճատվել են ներքին սուրհանդակային փոստային ծառայությունները:

«Ապահովագրական ծախսեր» հոդվածով նախատեսվում է Հանձնաժողովի ծառայողական ավտոմեքենաների ապահովագրություն:

ՀՀ կառավարության 2020 թվականի հունիսի 25-ի N 1061-Ն որոշմամբ Հանձնաժողովին ամրացված 1634,8 քառ. մետր շենքի տարածքը ՀՀ կառավարության 2020 թվականի նոյեմբերի 27-ի N 1896-Ն որոշմամբ հանձնվել է մեկ այլ պետական մարմնի, իսկ նոր տարածք Հանձնաժողովին դեռևս չի հատկացվել, ինչի արդյունքում առաջացել է ներկայիս գործունեության տարածքի վարձակալության ժամկետը երկարաձգելու անհրաժեշտություն: «Գույքի և սարքավորումների վարձակալություն» հոդվածով ծախսը պլանավորվել է վարձակալվող տարածքի մակերեսի և նախորդ տարվա պայմանագրային արժեքի հիման վրա:

Հանձնաժողովի ներկայացրած գործուղումների քանակը հիմնավորվում է տարեկան կտրվածքով ստացված հրավերների, միջազգային կառույցներին որպես անդամ հանդիսանալու և օտարերկրյա մրցակցային մարմինների հետ երկկողմ և բազմակողմ գործընկերության շրջանակներում տարբեր միջազգային միջոցառումներին մասնակցելու կարևորությամբ: Վերոնշյալ համաժողովներին մասնակցությունը հնարավորություն է ընձեռում մասնակից լինել միջազգային տնտեսական մրցակցության ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման գործընթացին, խթանել մրցակցության օրենսդրության կիրարկման մեխանիզմները, միջազգային հանրությանը ծանոթացնել Հանձնաժողովի՝ վերջին տարիների ձեռքբերումներին, ինչպես նաև ստանալ մրցակցության քաղաքականության կիրարկման ոլորտում նոր գիտելիքներ և փորձ:

«Համակարգչային ծառայություններ» հոդվածով նախատեսվել են Մալքերի էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության համակարգի, 1C Հանրային հատված հաշվապահական ծրագրի սպասարկման, հոսթինգի ծառայություններ, ինչպես նաև պլանավորվում է մարել նախորդ տարիներից մարման ենթակա որոշ

պարտավորություններ, որոնց համար հատկացված գումարները նախկինում սխալմամբ վերադարձվել են ՀՀ պետական բյուջե:

Առաջնորդվելով «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածով՝ քաղաքացիական ծառայողներն իրավունք ունեն բարելավելու և պարտավոր են բարելավել իրենց մասնագիտական գիտելիքները և կոմպետենցիաները շարունակական մասնագիտական զարգացման սկզբունքի վրա հիմնված վերապատրաստումներին մասնակցելու միջոցով: Համապատասխան մարմինները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները վերապատրաստումները կազմակերպելու և այդ վերապատրաստումներին քաղաքացիական ծառայողների մասնակցությունն ապահովելու համար: Մասնագիտական գիտելիքների վերաբերյալ վերապատրաստումները կազմակերպում է համապատասխան մարմինը, տվյալ դեպքում Հանձնաժողովը: Վերապատրաստման կարիքները գնահատվում են քաղաքացիական ծառայողի տարեկան կատարողականի գնահատմանը զուգընթաց: Տարեկան կատարողականի գնահատականը երկու կիսամյակների կատարողականների գնահատականների միջին թվաբանականն է: 2021 թվականի հունվար ամսվա դրությամբ հանձնաժողովի քաղաքացիական ծառայողներից 20-ը ըստ կիսամյակային հաշվետվությունների գնահատականների ունեն վերապատրաստման կարիք: Ըստ ՀՀ առաջին փոխվարչապետի 2019 թվականի հունվարի 9-ի «Քաղաքացիական ծառայողների վերապատրաստման կարգը, վերապատրաստում իրականացնող կազմակերպություններին ներկայացվող հիմնական չափանիշները, կրեդիտների սահմանման հիմնական սկզբունքները, կարիքները գնահատելու և անհատական ծրագիր կազմելու, ինչպես նաև համապատասխան մարմնի վերապատրաստման ծրագիր կազմելու, միջազգային հավաստագրերի ճանաչելիության սկզբունքները, տեսակները սահմանելու մասին» N 2-Ն որոշման 1-ին կետի 18-րդ ենթակետի՝ երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում քաղաքացիական ծառայողի

լիազորությունները դադարում են: Վերոնշյալով պայմանավորված՝ «Աշխատակիցների մասնագիտական զարգացման ծառայություններ» հոդվածով նախատեսվել է անհրաժեշտ չափով ծախս:

«Տեղեկատվական ծառայություններ» հոդվածի շրջանակներում նախատեսվում են թվային տպագրության ծառայություններ, ինչպես նաև տեղեկատվական թերթիկների, բուկլետների, հոլովակների պատրաստում և տարածում սպառողների իրազեկվածության մակարդակի բարձրացման նպատակով:

«Կառավարչական ծառայություններ» հոդվածով նախատեսվում է աուդիտի ծառայությունների ձեռքբերում:

«Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ» հոդվածի շրջանակներում նախատեսվում են լաբորատոր փորձագիտական ծառայություններ: Հաշվի առնելով շուկայական տնտեսությանը ու հատկապես ՀՀ-ում տնտեսության ճյուղային կառուցվածքին բնորոշ առանձնահատկությունները, այդ թվում՝ մի շարք ապրանքային շուկաներում համակենտրոնացման բարձր մակարդակը, վստահաբար կարող ենք ասել, որ իրականացվող հետազոտական աշխատանքների հրատապությունը և արդիականությունը կասկած չեն հարուցում: Ելնելով առկա իրողություններից, ինչպես նաև երկրի ու հասարակության զարգացման անհրաժեշտությունից՝ տվյալ փորձագիտական աշխատանքները անհրաժեշտություն են: Միաժամանակ, նույն տնտեսագիտական հոդվածով նախատեսվում է գնումների գործընթացի կազմակերպման և տարեկան հաշվետվության դիզայնի ծառայությունների ձեռքբերում:

«Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում» հոդվածով նախատեսված է Հանձնաժողովի ավտոմեքենաների նորոգման ծառայությունների ձեռքբերում: Ավտոմեքենաները սպասարկում են ամբողջ աշխատակազմին՝ անհրաժեշտություն առաջանալու դեպքում (գործուղումներ, ստուգիչ գնումներ, դատարանի այցեր և այլն): Բացի այդ, նույն հոդվածի շրջանակներում պլանավորվում է այլ ծառայությունների ձեռքբերում, ինչպիսիք են Հանձնաժողովի

կողմից շահագործվող էլեկտրական, պատճենահանող, համակարգչային սարքերի, օդորակիչների, հսկողության համակարգերի նորոգման և պահպանման ծառայությունները:

«Գրասենյակային նյութեր և հագուստ» հոդվածով ծախսերի պլանավորումը կատարվել է՝ հիմնվելով նախորդ տարվա փաստացի ծախսի վրա: Բացի այդ, 2020 թվականի հունվարի 16-ին Հանձնաժողովի, «Գրին Սիստեմս» ՍՊ ընկերության և «Յունիքոմփ» ՓԲ ընկերության միջև կնքված եռակողմ պայմանագրի համաձայն՝ Հանձնաժողովին մատակարարվել են տպիչ սարքեր (KYOCERA ECOSYS M2040dn), որոնց համար անհրաժեշտ է ձեռք բերել օրիգինալ քարթրիջներ (34 հատ): Այլ տեսակի քարթրիջների օգտագործումը կարող է հանգեցնել տպիչ սարքերի բնականոն աշխատանքի խափանմանը, ինչպես նաև կիակասի սարքն արտադրող ընկերության երաշխիքային պայմաններին: Նշված հանգամանքներից ելնելով՝ տպիչ սարքերի օգտակար պոտենցիալն ամբողջությամբ օգտագործելու համար 2022 թվականին նախատեսվում է համապատասխան քարթրիջների ձեռքբերում:

«Կենցաղային և հանրային սննդի նյութեր» հոդվածով ծախսերի պլանավորումը կատարվել է՝ հիմնվելով նախորդ տարվա փաստացի ծախսի վրա:

«Տրանսպորտային նյութեր» հոդվածով նախատեսվում է Հանձնաժողովի 4 ավտոմեքենաների շահագործման համար անհրաժեշտ նյութերի ձեռքբերում: Վառելիքի հաշվարկն իրականացնելիս հաշվի է առնվել բենզինի գնի բարձրացումը և պահեստում առկա բենզինի քանակը:

«Հատուկ նպատակային այլ նյութեր» հոդվածով պլանավորված գումարով նախատեսվում է իրականացնել հսկիչ գնումներ՝ տնտեսվարող սուբյեկտների մոտ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի խախտումները բացահայտելու նպատակով:

**Հավելված N 12**

# ՄԺԾԾ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՈՒՄ ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## 1. ՈԼՈՐՏԸ

Հանձնաժողովը «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ նաև՝ Օրենք) սահմանված նպատակի համաձայն՝ տնտեսական մրցակցության պաշտպանությունն իրականացնող մարմին է: Հանձնաժողովը համաձայն որդեգրված հրամայականի՝ ամրագրում է տնտեսական մրցակցության իրավիճակի վերլուծությունը, 2022-2024 թվականների ընթացքում իրականացվելիք մրցակցության պաշտպանության գերակա ուղղությունները, առկա հիմնախնդիրների հիման վրա սահմանում է ապրանքային շուկաներում մրցակցության խթանման համար անհրաժեշտ միջոցառումները, արդի պայմաններում մրցակցության խրախուսմանն ու զարգացմանն ուղղված կարգավորման մեխանիզմները: Հայաստանի Հանրապետությունում տնտեսական զարգացման բնագավառի հիմնական գերակա ուղղությունը շարունակում է մնալ փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացումն ու աջակցումը: Ծրագիրն ապահովում է Հանձնաժողովի 2021-2023թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի շարունակությունը:

## 2. ՈԼՈՐՏԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԹԻՐԱԽՆԵՐԸ

Հանձնաժողովը, համաձայն ծրագրային բյուջետավորման գործընթացի, յուրաքանչյուր տարի պարտավոր է իրականացնել 100 ուսումնասիրություն և լայն սպառման պարենային և ոչ պարենային նշանակության ապրանքների և ծառայությունների հինգ շուկաների (ոլորտների) ուսումնասիրություններ:

Ապրանքային շուկայի մրցակցային իրավիճակը գնահատող ուսումնասիրությունները սահմանում են ապրանքային շուկայի կառուցվածքը, կենտրոնացվածության աստիճանը, օրենսդրական խնդիրները և մրցակցությունը սահմանափակող երևույթները:

## 3. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Տնտեսական մրցակցության պաշտպանություն» ծրագրի շրջանակներում Հանձնաժողովի ոլորտային ծախսերի գերակա ուղղություններն են.

- Տնտեսական մրցակցության պաշտպանությանն ուղղված միջոցառումների իրականացում,
- «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում և հարակից մի շարք օրենքներում կատարված փոփոխությունների և լրացումների հիման վրա  նորմատիվ իրավական ակտերի լրամշակում և նոր նորմատիվ իրավական ակտերի ընդունում,
- Ապրանքային շուկաներում «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքով սահմանված չարաշահումների սահմանափակումը, կանխումը, արգելումը, ձեռնարկատիրության զարգացման նպաստումը,
- Միջազգային համանման կառույցներին ինտեգրվելը և փորձի փոխանակումը:

## 4. ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾԱԽՍԵՐԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

«Տնտեսական մրցակցության պաշտպանություն» ծրագրի գծով Հանձնաժողովի 2021 թվականի հաստատված բյուջեն կազմում է 539846,4 հազ. դրամ: 2022-2024թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագրով կանխատեսվում է համապատասխանաբար՝ 546161,7 հազ. դրամ (2022թ), 555715,3 հազ. դրամ (2023թ), 560293,4 հազ. դրամ (2024թ):